



ԲՎՐՁՐՎԳՈՒՅՆ ԴՎՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան
12 մայիսի 2022թ.
ԲԴԽ-40-Ո-Կ-8

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵՎԿԱՆ ԴՎՏԱՐԱԵԻ ԴՎՏԱՎՈՐ ԱՐՄԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՅՎԿԱՆ
ՊԱՏԱՄԱՆԱՍՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԶԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՎՐՁՐՎԳՈՒՅՆ ԴՎՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ`
ՅԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ`

Ճախագահությանը`
Քարձրագույն դասական խորհրդի
Ճախագահի պաշտոնակատար

Գ. Զհանգիրյանի,

մասնակցությանը`
անդամներ

- Գ. Բեքմեզյանի,
- Դ. Խաչատրյանի,
- Մ. Մակյանի,
- Լ. Մելիքջանյանի,
- Ս. Միքայելյանի,
- Վ. Մխիթարյանի,
- Վ. Քոչարյանի,

Դասավորների ընդհանուր ժողովի
Էթիկայի և կարգապահական հարցերի
հանձնաժողովի Ճախագահ

Ս. Մարաբյանի,

Դասավորների ընդհանուր ժողովի
Էթիկայի և կարգապահական հարցերի
հանձնաժողովի անդամ

Վ. Յովհաննիսյանի,

Վերաբննիչ քրեական դատարանի
դասավոր

Վ. Դանիելյանի,

Քարտուղարությանը`

Վ. Շիլաջյանի

դռնբաց նիստում, բննության առնելով Յայասանի Հանրապետության
դասավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի
հանձնաժողովի` «Դասավորին կարգապահական պասսաժանասվության ենթարկելու
վերաբերյալ միջնորդությամբ Քարձրագույն դասական խորհրդին դիմելու
մասին» 2022 թվականի մարտի 28-ի N-Կ-2/2022 որոշումը և կից ներկայացված
փաստաթղթերը,

1.Գործի նախապատմությունը.

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել թիվ ՍԳ1/0060/01/21 քրեական գործով փաստաբաններ Էմին Խաչատրյանի և Սմբատ Մինասյանի՝ Վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետև նաև՝ Դատարան) դատավոր Արմեն Դանիելյանին (այսուհետև նաև՝ Դատավոր) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 30.11.2021 թվականին Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին (այսուհետև նաև՝ Հանձնաժողով) ներկայացրած հաղորդումը:

Հանձնաժողովի 04.02.2022 թվականի N-Կ-2/2022 որոշմամբ Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Հանձնաժողովի 28.03.2022 թվականի N-Կ-2/2022 որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2.Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը.

Վարույթ հարուցած մարմինը, վկայակոչելով Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև նաև՝ Օրենսգրք) 17-րդ հոդվածի 1-ին մասը, 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, 174.1-րդ, 174.4-րդ, 174.6-րդ, 390-րդ, 418-րդ հոդվածները, Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, նշել է, որ ըստ «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և դատական նիստում քննության նշանակելու մասին» 11.09.2021 թվականի թիվ ՍԳ1/0060/01/21 որոշման՝ բողոքի քննությունը Վերաքննիչ դատարանում իրականացվել է վերաքննության կարգով, այլ ոչ թե վճռաբեկության, ուստի չէր կարող առանց կողմերի մասնակցության իրականացնել բողոքի քննություն առհասարակ, քանի որ ըստ Օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ամբաստանյալի մասնակցությունը պարտադիր է վերաքննիչ դատարանի նիստին, եթե բողոք է բերել դատախազը՝ ոչ հոգուս նրա: Այն հանգամանքը, որ առանց ամբաստանյալի և նրա պաշտպան(ներ)ի մասնակցության վերաքննիչ դատարանը քննության է առել դատախազի՝ ոչ հոգուս ամբաստանյալի ներկայացրած վերաքննիչ բողոքը և կայացրել որոշում՝ առերևույթ հանդիսանում է Օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի խախտում:

Հանձնաժողովը միջնորդությամբ նշել է նաև հետևյալը. «Ինչ վերաբերում է Դատավորի բացատրությամբ բերված այն փաստարկին, որ «(...) նշված ընթացակարգերի վերլուծության արդյունքում հարկ է նշել, որ առաջին առյուծի դատարանի վերը նշված միջանկյալ դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգմանը, նշված ընթացակարգերից, բնորոշ է «վճռաբեկության կարգը»», ապա այն անհիմն է, քանի որ ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի Գ. Հախնազարյանի վերաբերյալ 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵՔԲԴ/0219/01/08 որոշման՝ վճռաբեկության կարգով բողոքի քննություն իրականացնելու դեպքում պետք է այդ մասին նշվի վարույթ ընդունելու և դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ (սե՛ս կետ 15), մինչդեռ «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և դատական նիստում

բննությանն նշանակելու մասին՝ 11.09.2021 թվականի թիվ ՍԳ1/0060/01/21 որոշման մեջ «վճարելիության կարգով» բողոքի բննությունն իրականացնելու մասին նշում չկա:

Հանձնաժողովը նաև փաստում է, որ եթե անգամ «վճարելիության կարգով» է իրականացվում բողոքի բննությունը վերաբնիչ դատարանում, ապա այն դատարանին չի ազատում կողմերին պաշտան կարգով ծանուցելու պարտականությունից, քանի որ բացառապես պաշտան ծանուցման դեպքում է, որ դատարանն իրավունք ունի առանց կողմերի ներկայության իրականացնելու բողոքի բննությունն և կայացնելու դատական ակտ, մինչդեռ Հանձնաժողովը փաստում է, որ սույն գործով ՀՀ վերաբնիչ դատարանը նախազահիությանը դատավոր Ա.Դանիելյանի խախտել է պաշտան ծանուցման կանոնները»:

Հանձնաժողովն արձանագրել է նաև, որ ըստ ներկայացրած նյութերի՝ Դատարանն ընտրել է դատական նիստի օրվա և ժամի մասին կողմերին ծանուցելու թղթային եղանակը (*սե՛ս ամբասանյալ Վրթուր Սարգսյանին, պաշտպան Էմին Խաչատրյանին, Մմբաս Մինասյանին և դատախազ Ե.Մովսիսյանին ուղարկված թղթային ծանուցագրերը*), թեև, ըստ ՌԷԿՈՎԵՆՍՍԿԻԲ՝ վերստույնում փաստաթղթի՝ Դատավորի գործավար Ա.Թադևոսյանը 2021 թվականին նոյեմբերի 12-ին նաև զանգահարել է պաշտպան Ս.Մինասյանի (...) հեռախոսահամարին և սեղեկացրել 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին, նշանակված դատական նիստի օրվա և ժամի մասին: Ըստ նույն փաստաթղթի՝ պաշտպան Ս.Մինասյանը հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ կսեղեկացնի դատական նիստի օրվա և ժամի մասին ամբասանյալ Վրթուր Սարգսյանին և պաշտպան Էմին Խաչատրյանին:

Համաձայն 2021 թվականի նոյեմբերի 15-ի դատական նիստի արձանագրության համառոտագրության՝ դատական նիստում Դատարանը բննարկել է կողմերի ծանուցման հարցը և արձանագրել, որ հեռախոսագնդի միջոցով ծանուցվել են կողմերը, որից հետո, լսելով դատախազի դիրքորոշումն առ այն, որ ինքը չի առարկում դատական նիստը շարունակել առանց ամբասանյալի և պաշտպանների մասնակցության, շարունակել է բողոքի բննությունը: Ըստ նույն արձանագրության համառոտագրության՝ նախազահիո դատավորը հայտարարել է, որ դատարանի աշխատակազմը հեռախոսակապ է հաստատել պաշտպան Մինասյանի հետ, վերջինս հայտնել է, որ մեկ այլ նիստ է մասնակցում, խնդրել է սույն դատական նիստը հետաձգել: Լսելով դատախազի դիրքորոշումը և միաժամանակ հաշվի առնելով պաշտպանների չներկայանալու հանգամանքը՝ Դատարանը որոշել է նիստը հետաձգել և վերանշանակել 2021 թվականի նոյեմբերի 16-ին՝ ժամը 14:00-ին:

Ըստ դատավորի գործավար Ա.Թադևոսյանի 2021 թվականի նոյեմբերի 15-ին կազմած ՌԷԿՈՎԵՆՍՍԿԻԲ՝ վերստույնում փաստաթղթի՝ *Ձանգահարել է պաշտպան Մինասյանի հեռախոսահամարին և սեղեկացրել նույն օրը, ժամը՝ 14:00-ին հետաձգված դատական նիստի մասին: Ձանգահարել է նաև ամբասանյալ Վրթուր Սարգսյանին և պաշտպան Էմին Խաչատրյանին, սակայն կապ հաստատել չի հաջողվել: Պաշտպան Ս.Մինասյանը հայտնել է, որ կրկին կփորձի կապ հաստատել Վրթուր Սարգսյանի հետ, ինչպես նաև սեղեկացրել է, որ նախորդիվ չի կարողացել կապ հաստատել վերջինիս հետ*։

Համաձայն պաշտպան Ս.Մինասյանի Դատավորին հասցեագրված 2021 թվականի նոյեմբերի 15-ի դիմումի՝ պաշտպանը հայտնել է, որ դատարանի հետ հեռախոսակապի միջոցով սեղեկացել է, որ թիվ ՍԳ1/0060/01/21 քրեական գործով վերաբնիչ բողոք է ներկայացվել մեղադրողի կողմից և դատական նիստը նշանակված է 2021 թվականի նոյեմբերի 15-ին, ժամը՝ 14-00-ին: Հաշվի առնելով, որ ոչ ինքը, ոչ էլ մյուս պաշտպան Էմին Խաչատրյանը ծանուցված չեն եղել դատական նիստի մասին և այդ օրը առավոտվանից

Ծանրաբեռնված է եղել այլ քրեական գործերով, դրանից հետո, հաշվի առնելով սարածությունը, նույն օրը մյուս պաշտպանի հետ միասին գնալու են քաղաք Գորիս մասնակցելու ամբասանյալ Արթուր Սարգսյանի թիվ ՍԴ1/0060/01/21 քրեական գործով դատական նիստին (լուս datalex.am կայքի տեղեկատվության նիստը նշանակված է եղել 16.11.2021թ., ժամը 14:00)՝ խնդրել է նիստը հետաձգել այլ հերթի:

Ըստ 2021 թվականի նոյեմբերի 15-ի դատական նիստի արձանագրության համառոտագրության՝ նախագահող դատավոր Ա.Դանիելյանը հայտարարել է, որ դատավարության մյուս մասնակիցները չեն ներկայացել, սակայն ծանուցված են եղել, Դատարանի աշխատակազմը նաև հեռախոսակապի միջոցով է ծանուցել կողմերին, այնուհետև հրապարակել է պաշտպան Ս.Մինասյանի դիմումը դատական նիստը հետաձգելու մասին և որոշել է շարունակել բողոքի քննությունը:

Վարույթը հարուցող մարմինը նշել է, որ Դատարանը թեև ընտրել է ծանուցման թղթային եղանակը, սակայն առանց ծանուցումը պաշտպանության կողմի՝ ամբասանյալ Արթուր Սարգսյանի և վերջինիս պաշտպաններ Սմբատ Մինասյանի և Էմին Խաչատրյանի կողմից ստացած լինելու փաստի մասին հավաստման՝ իրականացրել է բողոքի քննությունը և կայացրել է որոշում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հեռախոսագանգի միջոցով դատական նիստի օրվա և ժամի մասին տեղեկացված է եղել պաշտպան Ս.Մինասյանը: Ընդ որում, Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ նախ՝ բացի պաշտպան Ս.Մինասյանից հեռախոսակապ հնարավոր չի եղել հաստատել ինչպես մյուս պաշտպանի, այնպես էլ ամբասանյալի հետ, երկրորդ՝ պաշտպան Մինասյանը գրավոր դիմում է ներկայացրել դատական նիստը հետաձգելու մասին և հայտնել, որ ոչ ինքը, ոչ էլ մյուս պաշտպան Էմին Խաչատրյանը ծանուցված չեն եղել դատական նիստի մասին և այդ օրը առավոտվանից ծանրաբեռնված է եղել այլ քրեական գործերով: Բացի այդ, նույն օրը մյուս պաշտպանի հետ միասին մեկնելու են քաղաք Գորիս մասնակցելու ամբասանյալ Արթուր Սարգսյանի թիվ ՍԴ1/0060/01/21 քրեական գործով դատական նիստին, որը նշանակված է եղել 16.11.2021թ., ժամը 14:00:

Հանձնաժողովը ներկայացված միջնորդությամբ մասնավորապես նշել է.

«Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական հանգամանքները, ինչպես նաև այն փաստերը, որ (1) Դատարանը 2021 թվականի նոյեմբերի 11-ին կայացված «Վերաբնիչ բողոքը վարույթ ընդունելու և դատական նիստում քննության նշանակելու մասին» որոշմամբ որոշել է դատական նիստին կանչել նաև պաշտպաններին և ամբասանյալին, (2) 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին կայացած դատական նիստին առկա չեն եղել պաշտպանական կողմի պաշտան ծանուցված լինելու, այն է՝ պաշտպաններ Ս. Մինասյանի և Է. Խաչատրյանի կողմից թղթային տարբերակով ուղարկված ծանուցագիրն ստացված լինելու կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174.6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով թղթային ծանուցագիրը վարույթին իրականացնող մարմին վերադարձվելու մասին ապացույցներ, որով պայմանավորված Դատարանը նիստը հետաձգել և նշանակել է նույն օրը ժամը 14:00-ին, որպեսզի ապահովվի ամբասանյալի և պաշտպանների մասնակցությունը դատական նիստին, (3) ինչպես նաև այն, որ ամբասանյալ Արթուր Սարգսյանն առհասարակ չի ծանուցվել բողոքի քննության օրվա և ժամի մասին ինչպես թղթային ծանուցագրի, այնպես էլ՝ հեռախոսակապի միջոցով, իսկ Ս. Մինասյանը Դատարան ներկայացված դիմումով խնդրել է հետաձգել 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին նշանակված բողոքի քննությունը՝ Հանձնաժողովը փաստում է, որ 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին կայացած դատական նիստի տեղի և ժամանակի մասին պաշտպանության կողմի

պատճառ ծանուցումն ու դատական նիստին ներկա զտնվելու օբյեկտիվ հնարավորություններն առերևույթ ապահովված չեն եղել:

Հանձնաժողովը փաստում է, որ նման պայմաններում Դատարանը, բնութային առարկա դարձնելով բողոքը և կայացնելով որոշում, առերևույթ թույլ է սվել կողմերի հավասարության, մրցակցության սկզբունքների խախտում և պաշտպանական կողմին դրել է մեղադրանքի կողմի համեմատ անհավասար վիճակի մեջ և զրկել նրանց ներկայացված բողոքի վերաբերյալ իրենց դիրքորոշումը հայտնելու իրավունքից ու հնարավորությունից:

Միաժամանակ Հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ ՍԴ1/0060/01/21 քրեական գործով Սյունիքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ ներկայացված վերաբնդիչ բողոքի բնութային 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին և նոյեմբերի 15-ին ժամը 14:00-ին կայացած դատական նիստերին պաշտպանության կողմի պատճառ ծանուցումն ապահոված չլինելու, մասնավորապես, 2021 թվականի նոյեմբերի 15-ի ժամը 11:00-ի դատական նիստին առանց պաշտպանության կողմի ծանուցված լինելու հավասարաճան կայության, իսկ 2021 թվականի նոյեմբերի 15-ի ժամը 14:00-ի դատական նիստին առանց թղթային ծանուցման, բացառապես պաշտպան Ս. Մինասյանին հեռախոսակապի միջոցով ծանուցելու, ինչպես նաև պաշտպան Ս.Մինասյանի կողմից դատական նիստը հետաձգելու դիմում ներկայացնելու պայմաններում, իրականացնելով բողոքի բնութային և կայացնելով որոշում՝ Դատարանը նախազանգից հաստատելով զրկելով Վ.Դանիելյանի դրսևորել է շտապողականություն և թույլ է սվել անձի արդար դատաբնութային իրավունքի բաղադրիչ հանդիսացող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքի, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունքի խախտումներ և զտնում է, որ բնարկվող դեպքում առկա են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 17-րդ, 23-րդ, 174.1-րդ, 174.4-րդ, 174.6-րդ և 390-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտման հասկանիշներ»:

Այսպիսով, Հանձնաժողովը զտնել է, որ Դատարանը թույլ է սվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք վերջինս կատարել է դիտարկությանը, և այս փաստը հաստատվել է նաև Դատարանի բացատրությանը ներկայացված իրավական դիրքորոշումներով, որտեղ վերջինս փորձել է հիմնավորել իր արարքի իրավաչափությունը, ուստի Հանձնաժողովի զննհասմամբ առկա են Դատարանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր:

3. Դատարանի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ .

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում Դատարանը պատասխան է ներկայացրել վարույթ հարուցած մարմնին, այնպես էլ բացատրություն՝ Բարձրագույն դատական խորհրդին, որով հայտնել է. «Քրեական գործի դատական բնութային ընթացքում կայացված խախտման միջոց կալանավորման ընթացքում, փոփոխելու, վերացնելու կամ պահպանելու վերաբերյալ որոշումների օրինականության և հիմնավորվածության սահմանների և կարգի մասով նախ հարկ է են համարում նշել հետևյալը. (...) դատարան Վ.Դանիելյանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությանը Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին, Հանձնաժողովի որոշման մեջ տեղ զտած վերլուծություններն ու դատողությունները՝ «պատճառ ծանուցման»,

«վերաբննության և վճարելիության» վերաբերյալ, սույն դեպքում առարկայագուրկ են: Միաժամանակ հարկ է արձանագրել, որ վերը նշված մեխանիզմի առկայությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ անձի արդար դասաբննության իրավունքի և դրա բոլոր բաղադրասարրերի, այդ թվում՝ ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցի սուզման ճեսանկյունից:

Վնիդիվելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ եթե համապատասխան կողմը նախապես իրազեկված է դասական նիսի սեղի և ժամանակի մասին և չի ներկայացել, ապա այդ հանգամանքը խոչընդոտ չէ գործի բննությունն առկա պայմաններում իրականացնելու համար և այն չի կարող հանգեցնել անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՄԵԿ-ով սահմանված իրավունքների անհարկի սահմանափակման կամ խախտման:

Միաժամանակ հարկ են համարում նշել, թեև հիշյալ ընթացակարգին առնչվող վերաբերելի իրավակարգավորումների համատեքստում, մեղադրյալի կամ ամբասանյալի պարտադիր մասնակցություն չի նախատեսվում, սակայն Վերաբննիչ դատարանն ինչպես ի թիվս այլ մասնակիցների, այնպես էլ ամբասանյալ Վրթուր Սարգսյանի առումով, իմ դիտարկմամբ դրսևորել է անհրաժեշտ և բավարար ջանասիրություն վերջինիս մասնակցությունը ևս Վերաբննիչ դատարանում կայանալիք դասական նիստերին ապահովելու, նրան նախապես իրազեկելու ուղղությամբ, մինչդեռ դրական արդյունք արձանագրել չի հաջողվել:

Այդ առնչությամբ, հարկ են համարում արձանագրել, որ պաշտպանության կողմին, պաշտպաններին, այդ թվում՝ նաև ամբասանյալ Վրթուր Սարգսյանին ոչ միայն ուղարկվել են գրավոր ծանուցագրեր, այլև Վերաբննիչ դատարանի աշխատակազմը ծառայողական հեռախոսահամարից նախապես նշանակված դասական նիստից օրեր առաջ հեռախոսակապ է հաստատել պաշտպանության կողմի ի դեմս պաշտպան Սմբատ Մինասյանի հետ և վերջինիս նախապես իրազեկել է ապագայում կայանալիք դասական նիստի ժամանակի և վայրի մասին, միաժամանակ խնդրել է, որ իր հերթին պարոն Ս.Մինասյանը իրազեկի ինչպես մյուս պաշտպան Է.Խաչատրյանին, այնպես էլ ամբասանյալ Վրթուր Սարգսյանին, ինչը պաշտպան Ս.Մինասյանի կողմից չի մերժվել:

Այնուհետև, Վերաբննիչ դատարանի դասական նիստին պաշտպանության կողմին մասնակցելու հնարավորությունը ընձեռնելու նկատմամբներից ելնելով դասական նիստը արդեն իսկ ժամային առումով ողջամտորեն հետաձգվել է, որի մասին հեռախոսակապով կրկին նախապես իրազեկվել է պաշտպանության կողմն առնվազն ի դեմս պաշտպան Սմբատ Մինասյանի, վերջինս հայտնել է, որ կփորձի իրազեկել ամբասանյալ Վրթուր Սարգսյանին: Ընդ որում, ամբասանյալ Վրթուր Սարգսյանի և պաշտպան Է.Խաչատրյանի հետ հեռախոսակապ հաստատել չի հաջողվել: Դրանից հետո, ողջամիտ ժամկետով դասական նիստը հետաձգելուց հետո, դարձյալ պաշտպանության կողմը ոչ միայն չի ներկայացել դասական նիստին, այլև պաշտպան Սմբատ Մինասյանի կողմից Վերաբննիչ դատարանում ստացվել և դասական նիստում հրապարակվել է վերջինիս դիմումը դասական նիստը հետաձգելու վերաբերյալ: Հիշյալ դիմումի առկայությունն ինքնին վկայում է պաշտպանության կողմի, առնվազն ի դեմս պաշտպան Սմբատ Մինասյանի դասական նիստի մասին նախապես իրազեկ լինելու մասին:

Բացի այդ, Վերաբննիչ դատարանում, այնուհետև փոստից ստացվել է պաշտպանության կողմին ծանուցագիրը հանձնված լինելու մասին, սվյալ դասական նիստի օրվա դրությամբ հավաստագիր: Ընդ որում, հարկ են համարում

արձանագրել, որ նշված հավաստագրում առկա չէր որևէ գրառում ստացման ժամի վերաբերյալ: Յեսևաբար, այդ մասով ևս Յանձնաժողովի ներկայացված փաստարկները և հետևություններն ընդունելի դիտարկվել չեն կարող:

Վրժարժվող հարցին առնչվող հիշյալ փաստական հանգամանքները ևս վկայում են, որ Վերաքննիչ դատարանը, կոնկրետ դեպքում, դրսևորել է անհրաժեշտ և բավարար ջանասիրություն, այդ թվում պաշտպանության կողմի՝ պաշտպանների և ամբասանյալ Վրթուր Սարգսյանի մասնակցությունը դատական նիստին ապահովելու ուղղությամբ: Եվ, հարկ է փաստել, որ կոնկրետ դեպքում, պաշտպանության կողմը ի դեմս պաշտպան Ս.Մինասյանի նախապես իրազեկ է եղել Վերաքննիչ դատարանում, կայանալիք դատական նիստերի և ժամանակի և վայրի մասին: Հարկ են համարում նշել նաև, որ վերը նշվածի վերաբերյալ իմ դիտարկումներն իրենց հավաստումը կարող են ստանալ դատական սուուզման նյութերով:

Վերոգրյալի հաշվառմամբ, զսնում են, որ կոնկրետ դեպքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ա.Դանիելյանիս անգամ առերևույթ վերազրվող խախտումների վերաբերյալ ինձ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին, Յանձնաժողովի որոշմամբ ներառված հիմնավորումներն ու այդ առնչությամբ արտահայտած պնդումներն իմ դիտարկմամբ ըստ էության փաստարկված չեն և իրավաչափ դիտարկվել չեն կարող:

Ամփոփելով վերը նշվածը՝ հարկ են համարում նշել, որ սվյալ դեպքում պաշտպանական կողմը՝ ի դեմս համապատասխան պաշտպանի, նախապես իրազեկված է եղել դատական նիստերի և ժամանակի մասին, այդ թվում նաև չի ներկայացել 2021 թվականի նոյեմբերի 15-ի ժամը 14.00-ի դատական նիստին և չներկայանալու վերաբերյալ և դատական նիստը հետաձգելու վերաբերյալ փաստարկները բավարար չեն եղել բացակայությունը հարգելի համարելու և դատական նիստը հետաձգելու համար:

Տվյալ դեպքում, եթե նույնիսկ դատավարության մասնակիցներին ծանուցման կարգը ուղղակիորեն չհամընկնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ծանուցման մեխանիզմներին, այնուամենայնիվ պաշտպանական կողմի նախապես իրազեկ լինելը՝ Վերաքննիչ դատարանի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում, բավարար են եղել պաշտպանական կողմի իրավունքները իրացնելու համար»:

Միաժամանակ Դատավորն իր բացատրությամբ նշել է, որ պաշտպանության կողմին, պաշտպաններին, այդ թվում նաև ամբասանյալ Վրթուր Սարգսյանին ոչ միայն ուղարկվել են գրավոր ծանուցագրեր, այլև Վերաքննիչ դատարանի աշխատակազմը ծառայողական հեռախոսահամարից նախապես նշանակված դատական նիստից օրեր առաջ հեռախոսակապ է հաստատել պաշտպանության կողմի ի դեմս պաշտպան Սմբատ Մինասյանի հետ և վերջինիս նախապես իրազեկել է ապագայում կայանալիք դատական նիստի ժամանակի և վայրի մասին, միաժամանակ խնդրել է, որ իր հերթին պարոն Ս.Մինասյանը իրազեկի ինչպես մյուս պաշտպան Է.Նաչատրյանին, այնպես էլ ամբասանյալ Վրթուր Սարգսյանին, ինչը պաշտպան Ս.Մինասյանի կողմից չի մերժվել:

Այնուհետև, Վերաքննիչ դատարանի դատական նիստին պաշտպանության կողմին մասնակցելու հնարավորությունը ընձեռնելու նկատմամբներից ելնելով դատական նիստն արդեն իսկ ժամային առումով ողջամտորեն հետաձգվել է, որի մասին հեռախոսակապով կրկին նախապես իրազեկվել է պաշտպանության կողմն առնվազն ի դեմս պաշտպան Սմբատ Մինասյանի, վերջինս հայտնել է, որ կփորձի

իրագեցել ամբասանյալ Արթուր Սարգսյանին: Ընդ որում, ամբասանյալ Արթուր Սարգսյանի և պաշտպան Է.Խաչատրյանի հետ հեռախոսակապ հաստատել չի հաջողվել: Դրանից հետո, ողջամիտ ժամկետով դատական նիստը հետաձգելուց հետո, դարձյալ պաշտպանության կողմը ոչ միայն չի ներկայացել դատական նիստին, այլև պաշտպան Սմբատ Մինասյանի կողմից Վերաքննիչ դատարանում ստացվել և դատական նիստում հրապարակվել է վերջինիս դիմումը դատական նիստը հետաձգելու վերաբերյալ: Հիշյալ դիմումի առկայությունն ինքնին վկայում է պաշտպանության կողմի, առնվազն ի դեմս պաշտպան Սմբատ Մինասյանի դատական նիստի մասին նախապես իրագեցել լինելու մասին:

Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով Օրենքի 154-րդ հոդվածի 4-րդ մասին 2-րդ կետի իրավակարգավորումները՝ Դատավորը խնդրել է Հանձնաժողովի 28.03.2022 թվականի N-Կ-2/2022 որոշմամբ՝ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը մերժել:

4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

1. Մյուսինքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահությամբ դատավոր՝ Գ.Գասպարյան), բնցելով թիվ ՍԳ1/0060/01/21 քրեական գործով պաշտպան Ս. Մինասյանի միջնորդությունը՝ Արթուր Լավրենցի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ, 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ ամբասանյալ Արթուր Լավրենցի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը փոփոխելու և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց գրավը կիրառելու մասին միջնորդությունը բավարարել է, այն է՝ որոշել է Արթուր Լավրենցի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխել և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել գրավը՝ գրավի չափ սահմանելով 20.000.000 (բսան միլիոն) ՀՀ դրամը, կամ դրան համարժեք արժեթղթերը, այլ արժեթղթերը կամ անշարժ գույքը:

2. 2021 թվականի հոկտեմբերի 21-ին Մյուսինքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՍԳ1/0060/01/21 քրեական գործով 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազ Ն.Մովսիսյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ պահանջելով բեկանել Մյուսինքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ ամբասանյալ Արթուր Լավրենցի Սարգսյանի (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով) նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը բնցության առնելու վերաբերյալ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը և ներկայացված միջնորդությունը մերժել:

3. Թիվ ՍԳ1/0060/01/21 քրեական գործով վերաքննիչ բողոքը 2021 թվականի նոյեմբերի 10-ին մակագրվել է Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արմեն Համլետի Դանիելյանին:

4. Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ա.Դանիելյանը 2021 թվականի նոյեմբերի 11-ին որոշում է կայացրել «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և դատական նիստում բնցության նշանակելու մասին», ըստ որի՝ վերաքննիչ բողոքը բնցության է նշանակվել դռնբաց դատական նիստում 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին: Նշված դատական ակտի եզրափակիչ մասում Դատարանը որոշել է դատական նիստին կանչել պաշտպաններին, ամբասանյալին և դատախազին:

5. Դասավորը 2021 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ԴԴ-8-Ե-4/466/21, ԴԴ-8-Ե-4/463/21, ԴԴ-8-Ե-4/461/21, ԴԴ-8-Ե-4/460/21 գրույթյուններով համապատասխանաբար ՀՀ գլխավոր դասախազության կոոուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դասախազ Ե. Մովսիսյանին, ամբասանյալ Արթուր Լավրենսի Սարգսյանին, պաշտպան Էմին Խաչատրյանին և պաշտպան Սմբատ Մինասյանին տեղեկացրել է, որ 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին, Վերաբնիչ քրեական դատարանում դասական նիստերի թիվ 4 դահլիճում դասական ստուգման է ենթարկվելու թիվ ՍԴ1/0060/01/21 քրեական գործով ամբասանյալ Արթուր Լավրենսի Սարգսյանի նկատմամբ ընդհանուր խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը բնութայան առնելու մասին Սյունիքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը: Եշված գրույթյամբ խնդրվել է նշված օրը և ժամին ներկայանալ դասական նիստին:

6. Դասավորի գործավար Ա. Թադևոսյանի կողմից 2021 թվականի նոյեմբերի 12-ին կազմվել է «ՀԵՈՎԽՈՍԱԳԻԲ», ըստ որի՝ 010-44-88-53 հեռախոսահամարից զանգահարել է դասախազ Ե. Մովսիսյանի 093-67-11-70, պաշտպան Ս. Մինասյանի 094-19-45-67 հեռախոսահամարներին և տեղեկացրել է 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին, նշանակված դասական նիստի օրվա և ժամի մասին: Պաշտպան Ս. Մինասյանը հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ կտեղեկացնի դասական նիստի օրվա և ժամի մասին ամբասանյալ Արթուր Սարգսյանին և պաշտպան Էմին Խաչատրյանին:

7. 2021 թվականի նոյեմբերի 15-ին Դատարանը դռնբաց դասական նիստում դասախազի վերաբնիչ բողոքի հիման վրա դասական ստուգման է ենթարկել Սյունիքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության հարցը: Եշված դասական նիստին ներկայացել է դասախազ Լ.Շիրվանյանը: Դասավորը հայտարարել է, որ դատարանը ծանուցումներ է ուղարկել դասավարության մյուս մասնակիցներին, դատարանի աշխատակազմի կողմից հեռախոսակապի միջոցով դասախազը և պաշտպանները իրագեկվել են դասական նիստի վայրի և ժամի վերաբերյալ, որի վերաբերյալ կազմվել են հեռախոսագրեր և որոշել է բողոքի բնութայունը շարունակել առկա պայմաններում:

8. 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ի դասական նիստին դասախազ Լ.Շիրվանյանը ներկայացրել է վերաբնիչ բողոքի վերաբերյալ հիմնավորումները, այնուհետև Դատավորը հայտարարել է, որ Դատարանի աշխատակազմը հեռախոսակապ է հաստատել պաշտպան Ս. Մինասյանի հետ, վերջինս հայտնել է, որ մեկ այլ նիստի է մասնակցում, խնդրել սույն դասական նիստը հետաձգել: Դատարանը, հաշվի առնելով պաշտպանների չներկայանալը, որոշել է դասական նիստը հետաձգել և վերանշանակել 2021 թվականի նոյեմբերի 16-ին՝ ժամը 14:00-ին:

9. Դասավորի գործավար Ա. Թադևոսյանի կողմից 2021 թվականի նոյեմբերի 15-ին կազմվել է «ՀԵՈՎԽՈՍԱԳԻԲ», ըստ որի՝ 010-44-88-53 հեռախոսահամարից զանգահարել է պաշտպան Ս. Մինասյանի 094-19-45-67 հեռախոսահամարին և տեղեկացրել է նույն օրը՝ ժամը 14:00-ին, հետաձգված դասական նիստի մասին: Ըստ հեռախոսագրի՝ Ա. Թադևոսյանը զանգահարել է նաև ամբասանյալ Արթուր Սարգսյանին և պաշտպան Էմին Խաչատրյանին 093-99-11-99 և 094-12-00-50 հեռախոսահամարներին, սակայն կապ հաստատել չի հաջողվել: Պաշտպան Ս. Մինասյանը, հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ կրկին կփորձի կապ հաստատել ամբասանյալ Արթուր Սարգսյանի հետ, ինչպես նաև տեղեկացրել է, որ նախորդիվ չի կարողացել կապ հաստատել վերջինիս հետ:

10. Պաշտպան Ս.Մինասյանը 2021 թվականի նոյեմբերի 15-ին դիմում է ներկայացրել Դատարանին, որով հայցնել է, որ հեռախոսակապի միջոցով տեղեկացել է, որ թիվ ՍԳ/0060/01/21 քրեական գործով վերաքննիչ բողոք է ներկայացվել մեղադրողի կողմից և դատական նիստը նշանակված է 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին: Եզված դիմումում Ս.Մինասյանը հայցնել է, որ ոչ ինքը ոչ էլ մյուս պաշտպան Էմին Խաչատրյանը ծանուցված չեն եղել դատական նիստի մասին, ինչպես նաև իրեն և Է.Խաչատրյանին չի տրամադրվել Արթուր Սարգսյանի վերաբերյալ գրավ կիրառելու առաջին ասյանի դատարանի բողոքարկվող դատական ակտը: Երկայացված դիմումով պաշտպան Ս.Մինասյանը խնդրել է թիվ ՍԳ/0060/01/21 քրեական գործով վերաքննիչ բողոքի քննության համար 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 14-00-ին, նշանակված դատական նիստը հետաձգել այլ հերթի, ինչպես նաև տրամադրել Արթուր Սարգսյանի նկատմամբ գրավ կիրառելու առաջին ասյանի դատական ակտը և ստանալու պահից պահպանել 10 օրյա ժամկետում պաշտպանության կողմի բողոք բերելու իրավունքը:

11. 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին, դատական նիստում շարունակվել է վերաքննիչ բողոքի քննությունը, դատական նիստին ներկայացել է դատախազ Լ.Շիրվանյանը: Դատավորը դատական նիստին հայտարարել է, որ մյուս մասնակիցները չեն ներկայացել, սակայն ծանուցված են եղել, դատարանի աշխատակազմը նաև հեռախոսակապի միջոցով է ծանուցել կողմերին: Դատարանը հրապարակել է պաշտպանի դիմումը դատական նիստը հետաձգելու վերաբերյալ, այսուհետև, որոշել է բողոքի քննությունը շարունակել առկա պայմաններում: Այնուհետև Դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ, որից հետո հրապարակել է որոշումը:

12. Դատարանի Դատավորի 2021 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազ Ե.Մովսիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Ամբաստանյալ Արթուր Լավրենտի Սարգսյանի (...) նկատմամբ կալանավորումը փոփոխելու և որպես խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին, Սյունիքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը բեկանվել է: Պաշտպան Ս.Մինասյանի միջնորդությունը՝ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխելու և որպես խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ, մերժվել է:

13. Փաստաբաններ Էմին Խաչատրյանը և Սմբատ Մինասյանը թիվ ՍԳ1/0060/01/21 քրեական գործով Դատարանի ծանուցագրերն ստացել են 2021 թվականի նոյեմբերի 15-ին, իսկ ամբաստանյալ Արթուր Լավրենտի Սարգսյանի կողմից Դատարանի ծանուցագիրն ստանալու փաստը հավաստող ապացույց նշված գործում բացակայում է:

5.Բարձրագույն դատական խորհրդի պահանջարկությունները և եզրահանգումները.

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, լսելով Հանձնաժողովի նախագահի և Հանձնաժողովի անդամի հաղորդումը, Դատավորի բացատրությունը, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պահանջարկությամբ.

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդն էական է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք թիվ ՄԳ/0060/01/21 թրեական գործով վերաբնդիչ բողոքի շրջանակներում Դասավորը թույլ է սվել դասավարական իրավունքի նորմի/նորմերի խախտում,
2. արդյո՞ք Դասավորի կողմից թույլ տրված դասավարական իրավունքի նորմի/նորմերի խախտումն առերևույթ պարունակում է «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված՝ Դասավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հասկանիշներ:

«Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դասավորը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:

Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են.

Սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիսավորությանը կասարված, եթե դասավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությանը կասարված, եթե դասավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև սվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել հետևյալը.

1. դասավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջ ունի ոչ միայն ձևական, այլև նյութական բաղադրիչ,

2. դասավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջի նյութական բաղադրիչը պայմանավորված է խախտման կարևորության աստիճանով,

3. դասավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջի նյութական բաղադրիչը՝ խախտման կարևորության աստիճանը, որպես հետևանք, պետք է կասկածի տակ դնի դասավորի համապատասխանությունն իր կարգավիճակին և հեղինակագրկի դասական իշխանությունը,

4. **դասավորի կարգապահական պատասխանատվության հիմք կարող է լինել բացառապես նրա մեղավոր վարքագիծը:**

«Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված Բարձրագույն դասական խորհրդի համապատասխան լիազորությունների շրջանակներում, յուրաքանչյուր դեպքում արարքը կարգապահական խախտում որակելու և հետևաբար համապատասխան պատասխանատվության միջոց կիրառելու համար Բարձրագույն դասական խորհուրդը պետք է գնահատի արարքի համապատասխանությունը Օրենքով սահմանված դասավորի վարքագծի ընդհանուր կանոններին կամ դասավորի վարքագծի կանոններին ի պաշտոնե գործելիս՝ բացահայտելով իրավանորմերում առկա ոչ որոշակի ձևակերպումների իրավական բովանդակությունը:

Բարձրագույն դասական խորհուրդը հարկ է համարում նշել, որ դասավորի կարգապահական պատասխանատվության շեղանկյունից մեղքը դասավորի վերաբերմունքն է իր կողմից կասարված արարքի նկատմամբ:

Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դասական սուբյեկտը կասարվում է դոմիկալ դասական նիստում՝ դասախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրագել կողմի չներկայանալը չի խոչընդոտում դասական սուբյեկտին իրականացնելուն:

Օրենսգրքի 174.1. հոդվածի համաձայն՝

1. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարսավոր է թնջական կամ այլ դասավարական գործողության կամ դասական նիստի մասին պաշտոն ծանուցել այն անձանց, որոնք ունեն դրան մասնակցելու իրավունք կամ պարսականություն:

2. Անձի ծանուցումը կատարվում է`

1) թղթային ծանուցագրով.

2) էլեկտրոնային ծանուցագրով.

3) ծանուցվող անձի մասնակցությամբ կատարվող թնջական կամ այլ դասավարական գործողության կամ ընթացող դասական նիստի ժամանակ ծանուցման մասին հայտարարելով և միաժամանակ համապատասխան արձանագրության մեջ այդ մասին նշում կատարելով:

Օրենսգրքի 390-րդ հոդվածի համաձայն`

1. Վերաբնիչ դատարանում գործերի թնջությունը կատարվում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև վճռաբեկ դատարանում գործերի թնջության համար սահմանված կանոններով, բացառությամբ վճռաբեկ դատարանում բողոքի թնջության գրավոր ընթացակարգով սահմանված կարգի:

2. Գործի թնջության տեղի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են:

3. Դատական նիստին պարտադիր մասնակցում են`

1) դատախազը.

2) ամբաստանյալը, որը ներկայացրել է բողոքը, կամ որի շահերի պաշտպանության համար բողոք է ներկայացրել պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը, կամ երբ բողոք է բերել դատախազը` ոչ հօգուտ դատապարտյալի.

3) պաշտպանը` սույն օրենսգրքի 69 հոդվածով նախատեսված դեպքերում:

4. Դատավարության մյուս մասնակիցների չներկայանալը չի խոչընդոտում գործը թնջելուն և դատական ակտ կայացնելուն:

4.1. (...)

5. Սույն օրենսգրքի 45.3-րդ գլխով նախատեսված կարգով կայացված դատական ակտի դեմ բերված վերաբնիչ բողոքի թնջումը ամբաստանյալի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն:

Վերոնշյալ նորմերի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը սահմանել է վերաբնիչ դատարանում բողոքի թնջության ընթացակարգը, ինչպես նաև` թե բողոքի թնջության ժամանակ կողմերից ովքեր պետք է կամ իրավունք ունեն մասնակցելու վերաբնիչ դատարանում վերաբնիչ բողոքի թնջումը: Օրենսգրքում հսակ նշված են այն դեպքերը, երբ դատական ստուգումն իրականացվում է դատախազի և պաշտպանի պարտադիր մասնակցությամբ:

Միաժամանակ օրենսդրի կողմից հնարավորություն է նախատեսվել որպես խափանման միջոց ընտրված կալանքի օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ վերաբնիչ դատարանի կողմից դատական ակտերի վերանայման համար, այն է` Օրենսգրքով նախատեսված է, որ բողոքը թնջելու օրվա մասին նախապես իրագեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն, իսկ պաշտպանյալի պարտադիր մասնակցություն չի նախատեսվում:

Սույն կարգապահական վարույթի մշակման նպատակով նախատեսված է դառնում, որ Մյուսերի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահությամբ դատավոր` Գ.Գասպարյան), թնջելով թիվ

ՄԴ1/0060/01/21 քրեական գործով պաշտպան Ս. Մինասյանի միջնորդությունը՝ Արթուր Լավրենցի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ, 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ ամբասանյալ Արթուր Լավրենցի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը փոփոխելու և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց գրավը կիրառելու մասին միջնորդությունը բավարարել է, այն է՝ որոշել է Արթուր Լավրենցի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխել և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել գրավը՝ գրավի չափ սահմանելով 20.000.000 (բսան միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արժեթղթերը, այլ արժեթղթերը կամ անշարժ գույքը:

2021 թվականի հոկտեմբերի 21-ին Սյունիքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՄԴ1/0060/01/21 քրեական գործով 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ Գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազ Ն.Մովսիսյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ պահանջելով բեկանել Սյունիքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ ամբասանյալ Արթուր Լավրենցի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու վերաբերյալ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը և ներկայացված միջնորդությունը մերժել:

Դատարանը 2021 թվականի նոյեմբերի 11-ին որոշում է կայացրել «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և դատական նիստում քննության նշանակելու մասին», ըստ որի՝ վերաքննիչ բողոքը քննության է նշանակվել դռնբաց դատական նիստում 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին: Եղված դատական ակտի եզրափակիչ մասում Դատարանը որոշել է դատական նիստին կանչել պաշտպաններին, ամբասանյալին և դատախազին:

Դատավորը 2021 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ԴԴ-8-Ե-4/466/21, ԴԴ-8-Ե-4/463/21, ԴԴ-8-Ե-4/461/21, ԴԴ-8-Ե-4/460/21 գրություններով համապատասխանաբար Գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դատախազ Ն. Մովսիսյանին, ամբասանյալ Արթուր Լավրենցի Սարգսյանին, պաշտպան Էմին Խաչատրյանին և պաշտպան Սմբատ Մինասյանին ժողովակազմի անդամներ է, որ 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին, Վերաքննիչ քրեական դատարանում դատական նիստի թիվ 4 դահլիճում դատական ստուգման է ենթարկվելու թիվ ՄԴ1/0060/01/21 քրեական գործով ամբասանյալ Արթուր Լավրենցի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին Սյունիքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը: Եղված գրությամբ խնդրվել է նշված օրը և ժամին ներկայանալ դատական նիստին:

Դատավորի գործավար Ա. Թադևոսյանի կողմից 2021 թվականի նոյեմբերի 12-ին կազմվել է «ՀԵՌՎԽՈՍԱԳԻԲ», ըստ որի՝ 010-44-88-53 հեռախոսահամարից զանգահարել է դատախազ Ն. Մովսիսյանի 093-67-11-70, պաշտպան Ս. Մինասյանի 094-19-45-67 հեռախոսահամարներին և ժողովակազմի անդամներ է 2021 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին, նշանակված դատական նիստի օրվա և ժամի մասին: Պաշտպան Ս.Մինասյանը հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ կսեղեկացնի դատական նիստի օրվա և ժամի մասին ամբասանյալ Արթուր Սարգսյանին և պաշտպան Էմին Խաչատրյանին:

2021 թվականի նոյեմբերի 15-ին Դատարանը դռնբաց դատական նիստում դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման է ենթարկել Սյունիքի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման

օրինականության և հիմնավորվածության հարցը: Եզված դասական նիստին ներկայացել է դասախազ Լ.Շիրվանյանը:

Դասավորի 2021 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ Գլխավոր դասախազության կոոուպցիոն հանցագործությունների գործերով վարչության դասախազ Ե.Մովսիսյանի վերաբնդիչ բողոքը բավարարվել է: Ամբասանյալ Արթուր Լավրենտի Սարգսյանի (...) նկատմամբ կալանավորումը փոփոխելու և որպես խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին, Մյունխիֆի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դասարանի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը բեկանվել է: Պաշտպան Ս.Մինասյանի միջնորդությունը՝ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխելու և որպես խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ, մերժվել է:

Օրենսգրքում խնդրո առարկա ընթացակարգին առնչվող վերաբերելի իրավակարգավորումների համատեքստում, վերաբնդիչ դասարանում բողոքը դասախազի կողմից ներկայացրած լինելու դեպքում, **ամբասանյալի** պարտադիր մասնակցություն, ճառացի մեկնաբանությամբ, չի նախատեսվում:

Մասնավորապես, Օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դասական նիստին պարտադիր մասնակցում են՝ ամբասանյալը, որը ներկայացրել է բողոքը, կամ որի շահերի պաշտպանության համար բողոք է ներկայացրել պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը, կամ երբ բողոք է բերել դասախազը՝ ոչ հօգուս **դասապարտյալի»:**

Սույն գործով Բարձրագույն դասական խորհուրդը անհրաժեշտ է համարում դիտարկել քրեական դասավորությունում անալոգիայի կիրառման որոշակի կողմերին մասնավորապես այն հարցին, թե արդյոք օրենքի անալոգիայի կիրառումը կարող է դիտարկվել որպես դասավորի պարտականություն և ապա՝ արդյոք այդ պարտականությունը դասավորի կողմից չկատարելը կարող է դառնալ նրան նյութաիրավական, սվյալ դեպքում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ **ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների ճշգրտակցությունից,** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, սվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ սվյալ իրավափոփոխությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե սվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը:

«Իրավական ակտերի մասին» օրենքի (գործել է մինչև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը 07.04.2018 թվականին ուժի մեջ մտնելը) և վերը մեջբերված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի կարգավորումները խնդրո առարկայի առթիվ սկզբունքորեն ճարտեր են: Առաջինի 88-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում էր, որ «եթե ծագած հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ իրավական այլ ակտերով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կարող են միայն օրենքով նախատեսված դեպքերում կիրառվել համանման հարաբերություններ

կարգավորող իրավական ակտերը (անալոզիա)»։ Գործող՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենքի անալոզիան և իրավունքի անալոզիան կարող են կիրառվել միայն, եթե սվյալ օրենքով չի արգելվում անալոզիայի կիրառումը։

Այս առումով Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ ակնհայտորեն, օրենսդրի նպատակն է ավելի լայն հնարավորություններ տալ իրավակիրառին՝ անալոզիա կիրառելու համար։ Միաժամանակ, գործող օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքի կամ իրավունքի անալոզիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը։

Այսինքն, մեջբերված իրավակարգավորման համաձայն՝ օրենսդրի նպատակն է անձի իրավիճակը բացառապես բարելավող մեկնաբանության հնարավորություն ընձեռելը։ Վերջինս, սակայն, չի նշանակում, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այդ հնարավորությունից օգտվելը հանդիսանում է իրավակիրառի, սվյալ դեպքում՝ դատավորի պարտականությունը, այլ կերպ ասած, որ դատավորը կրում է ամբաստանյալի պարտադիր մասնակցությունն ապահովելու պարտականություն՝ անգամ բողոքը դատախազի կողմից բերված լինելու դեպքում։

Բարձրագահույն դատական խորհուրդն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանում խնդրո առարկա հարցերով հրավիրվող նիստերին պարտադիր է միայն այն ամբաստանյալի մասնակցությունը, որը ներկայացրել է բողոքը, կամ որի շահերի պաշտպանության համար բողոք է ներկայացրել պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը, իսկ դատախազի կողմից բողոք բերվելու դեպքում պարտադիր է միայն դատապարտյալի կարգավիճակ ունեցող անձի մասնակցությունը, այսինքն՝ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է այն, ինչը բառացի նախատեսված է Օրենսգրքով։

Այսինքն, Դատավորը, ՀՀ օրենսդրության համաձայն, չունենալով անալոզիա կիրառելու պարտականություն, իրեն պարտավորված համարելով իրազեկել պաշտպանության կողմի մասնակիցներին նիստի մասին, **պատշաճ ջանասիրություն է ցուցաբերել ամբաստանյալի և նրա ներկայացուցչի ներկայությունը հրավիրված դատական նիստին ապահովելու համար՝ ուղարկել է գրավոր ծանուցագրեր, իր աշխատակազմի միջոցով հեռախոսակապով փորձել իրազեկել նիստի մասին, հեռաձգելի նիստերը**։ Այդ ջանասիրության արդյունքում Դատարանին հաջողվել է կապ հաստատել պաշտպան Ս. Մինասյանի հետ և տեղեկացնել նախապես հրավիրված դատական նիստի ժամանակի մասին, իսկ մնացած կողմերի հետ, չնայած արված փորձերին, կապ հաստատել չի հաջողվել։

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ թիվ ՍԴ1/0060/01/21 քրեական գործով վերաքննիչ դատարանն ինչպես ի թիվս այլ մասնակիցների, այնպես էլ ամբաստանյալ Վրթուր Սարգսյանի առումով, դրսևորել է անհրաժեշտ և բավարար ջանասիրություն վերջինիս մասնակցությունը ևս վերաքննիչ դատարանում կայանալիք դատական նիստերին ապահովելու, նրան նախապես իրազեկելու ուղղությամբ, մինչդեռ դրական արդյունք չի արձանագրվել։

Հանձնաժողովի նախագահը, Բարձրագույն դատական խորհրդում հրավիրված կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նիստում

ընդունեց, որ եթե Դասարանը կարողանար ապահովել մյուս կողմերի պահանջները կախարությունը հրավիրված նիստին, ապա սվյալ դեպքում Հանձնաժողովը Դասավորի գործողություններում մեղքի բացակայության հարցը:

Այս առումով ևս Բարձրագույն դատական խորհուրդը, ղեկավարվելով անձնական պատասխանատվության սկզբունքով, այն է՝ յուրաքանչյուր ոք պատասխանատու է իր գործողության կամ անգործության համար, արձանագրում է, որ Դասավորին վերագրվող արարքում, այն է՝ թիվ ՍԳ1/0060/01/20 քրեական գործով առանց ամբասանյալի և նրա պաշտպանների մասնակցության բնույթի առարկա դարձնելով բողոքը և կայացնելով որոշում, մեղքի առկայությունը չի կարող կախվածության մեջ զսնվել Դասավորից բացի այլ անձանց, սվյալ դեպքում՝ ամբասանյալի և նրա պաշտպանների վարքագծից, ինչպես նաև Դասարանի զանգերին պատասխանելու նրանց պատասխանատվությունից:

Վերոգրյալի արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ Հանձնաժողովի կողմից Դասավորին վերագրվող արարքում բացակայում է Դասավորի մեղքը, որպիսի պայմաններում Դասավորի կայացրած որոշման շրջանակներում առերևույթ բացակայում են դատավարական իրավունքի նորմի/նորմերի խախտումները, այդ թվում՝ Դասավորի գործողությունների ոչ իրավաչափ բնույթը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՌՀայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի՝ սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 10-րդ մասով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 155-րդ հոդվածով՝ Բարձրագույն դատական խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դասավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը՝ Վերաբննիչ քրեական դատարանի դատավոր Արմեն Դանիելյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, մերժել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

*ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ
ԵՎԽԱՎՈՐՅԻ*

ՊՎՇՏՈՆՆԱԿԱՆԱԿ

Գ. ԶՅՎԵՂԻՐՅԱՆ

ՎԵՂԱՍԵՐ՝

Դ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Լ. ՄԵԼԻՔՅԱՆՅԱՆ

Ս. ՄԻՔՅԵԼՅԱՆ

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

Հասուկ կարծիք պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Գ. ԲԵՔՄԵՉՅԱՆ

